ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2020 թ. **N--- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԱՆ ԷՄԻԼԻ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆՑԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Արման Էմիլի Տեր-Ավետիքյանցին սեփականության իրավունքով պատկանող քաղաք Երևան, Հանրապետության փողոց 24, բնակարան 12 հասցեում գտնվող շինության նկատմամբ սահմանել գույքահարկի արտոնություն՝ ազատելով 2012-2020 թվականները ընկած ժամանակահատվածի համար սահմանված 249.953 /երկու հարյուր քառասունինը հազար ինը հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամի չափով գույքահարկի վճարումից:

Նախագծի հեղինակ՝
ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ **Լուսինե Գևորգյան**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՄԱՆ ԷՄԻԼԻ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆՑԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարան է դիմել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողության ծառայությունը՝ Նունե Օհանյանի դիմումի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու նիստում քննարկելու Արման Էմիլի Տեր-Ավետիքյանցի սեփականություն հանդիսացող բնակարանի գույքահարկի գծով չկատարված հարկային պարտավորությունների մասով արտոնություն սահմանելու վերաբերյալ:

Արման Էմիլի Տեր-Ավետիքյանցը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 18.05.2018 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն ճանաչվել է անգործունակ, քանի որ տառապում է «Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն\արտահայտված դեբիլություն» հոգեկան հիվանդությամբ, ինչի հետևանքով Նունե Օհանյանը նշանակվել է խնամակալ:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից առաջարկվում է քննարկել տվյալ բնակարանի գույքահարկի չվճարված պարտավորության հանդեպ արտոնություն սահմանելու վերաբերյալ որոշումը:

Նախագծի հեղինակ՝
ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ **Լուսինե Գևորգյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՄԱՆ ԷՄԻԼԻ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆՑԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արման Էմիլի Տեր-Ավետիքյանցին արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՄԱՆ ԷՄԻԼԻ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆՑԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ԷԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արման Էմիլի Տեր-Ավետիքյանցին արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

Նախագծի հեղինակ՝
ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ **Լուսինե Գևորգյան**